Ծանոթացեք

Բարի

հետ

UN for Persons with Disabilities in Georgia

MAC GEORGIA

unicef for every child

«Ծանոթացեք Բաբիի հետ» հրապարակումը մշակվել է 2022 թվականին «Մակ-Ջորջիա» կազմակերպության կողմից՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Կայուն զարգացման նպատակների հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ՝ «Վրաստանում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության համակարգի ուժեղացում» ծրագրի շրջանակներում:

Իլուստրացիաները և դիզայնը մշակված են ֆորսետի կողմից

Copyright: © MAC Georgia

Հեղինակ: Մարիամ Խվադագիանի
Համահեղինակներ: Մայա Բագրատիոնի-Գրուզինսկի, Մայա Ծուլաձե, Քեթլին Դիր

Թբիլիսի, 2022

Ծանոթացեք Բաբիի հետ

Բաբին 7 տարեկան աղջիկ է: Նա շատ է սիրում քանդակել, երաժշտություն լսես, քայլել, չմուշկներով սահել և պատմ-վածքներ լսել: Բաբին չի տեսնում, նա կույր է:

Մի օր, երբ Բաբին խաղում էր իր սիրելի տիկնիկով, ծնողներն ասացին, որ պետք է գնան բժշկի մոտ՝ հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակ ստանալու:



Բաբին առաջին անգամ լսեց այս տարօրինակ բառերը և հարցրեց.

– Ի՞նչ է նշանակում «հաշմանդամություն ունեցող անձ»:

– Հաշմանդամություն ունեցող անձն այն մարդն է, ով տարբերվում է մնացածից, օրինակ նրանով, որ չի կարողանում տեսնել, կամ քայլել, կամ դժվարանում է հիշել իրողությունները: Հաճախ նա դժվարությունների է հանդիպում տարբեր գործողությունների՝ խաղալու, սովորելու, հագնվելու, լվացվելու ժամանակ: Երբեմն նաև շրջակա միջավայրն է դժվարություններ ստեղծում մարդու համար, – բացատրեց հայրիկը Բաբիին:

Ինչպ՞ես կարող է շրջակա միջավայրը մարդու համար դժվարություններ ստեղծել, - հետաքրքրվեց Բաբին:

Շրջակա միջավայրը դժվարություններ է ստեղծում, այն դեպքում, երբ պուրակը, դպրոցը, փողոցը, շենքը բավականաչափ հարմարեցված չեն, որպեսզի մարդը կարողանա ազատ խաղալ, սովորել կամ տեղաշարժվել: Օրինակ՝ մարդը, ով չի կարողանում քայլել, ինչպ՞ես պետք է հասնի հինգերորդ հարկ, եթե տունը վերելակ չունի: Շատ դժվար կլինի, այդպես չէ՞: Կամ եթե փողոցում ձայնային լուսացույց չկա, ինքդ էլ գիտես, թե կույրի համար որքան դժվար է ճանապարհն անվտանգ անցնելը:

Բաբին գլխով արեց՝ ի նշան համաձայնության:

Նաև այլ մարդկանց վերաբերմունքն է երբեմն դժվարություններ ստեղծում, - խոսակցությանը միջամտեց մայրիկը: Օրինակ՝ ոմանք կարծում են, որ եթե մարդը տարբերվում է մյուսներից, նա չի կարող մյուսների հետ շփվել, կամ նրանց նման գործողություններ անել:

Այսինքն, քանի որ ես տարբերվում եմ և շրջակա միջավայրն էլ իմ կարիքներին հարմարեցված չէ, ուրեմն ես հաշմանդամություն ունեցող անձ եմ, - տխուր դեմքով հարցրեց Բաբին:

Ինչու՞ տխրեցիր: Մենք բոլորս էլ տարբեր ենք, բոլորն ունեն տարբեր կարողություններ և կարիքներ – քնքշորեն պատասխանեց մայրիկը:
Բաբին զարմացած հարցրեց մորը.

Եթե առանց այն էլ բոլորս տարբեր ենք, ապա ի՞նչ կարիք կա հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակ ստանալ: Ինչու՞ պետք է ինչ-որ մեկն այն ունենա, կամ ինչու՞ պետք է ունենամ ես:

Քանի որ հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակն օգնում է մարդուն ստանալ իր համար անհրաժեշտ աջակցությունը: Ոմանք խոսքի և լեզվի թերապևտի կամ ֆիզիկական թերապևտի աջակցության կարիք ունեն: Ոմանք՝ գումարի, բժշկական կամ այլ լրացուցիչ կարիքների համար՝ կախված իրենց հաշմանդամության տեսակից: Այ, օրինակ, մեր հարևան Դուդուն, քանի որ չի կարողանում քայլել, հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակն օգնել է նրան անվասայլակ ձեռք բերել: Հաշմանդամության կարգավիճակը նշանակում է, որ անձը ուրիշներից տարբերվող, լրացուցիչ աջակցության կարիք ունի: Օրինակ, ինչպես որ քեզ շարժվելու համար անհրաժեշտ է սպիտակ ձեռնափայտ և շոշափողական սալահատակ դպրոցում, որը կարող ես զգալ հպումով և ինքնուրույն հասնել դասարան, - բացատրեց մայրը:

Բաբին ուշադիր լսեց և ծնողների հետ համաձայնեց այցելել բժշկին: Հետո նա դարձավ դեպի իր տիկնիկը և ասաց.

Հասկացա՞ր, թե ինչի համար էր անհրաժեշտ հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակը:

Հաջորդ օրը Բաբին և նրա ծնողները միասին գնացին բժշկի: Բժիշկը հաճելի ձայնով կին էր:

Նա ողջունեց Բաբիին և ծնողներին, ստուգեց Բաբիի բժշկական փաստաթղթերը, որոնք ծնողներն իրենց հետ վերցրել էին: Այնուհետև Բաբիին հարցեր տվեց իր առօրյայի մասին: Բժիշկը հետաքրքրվեց, թե ինչով է Բաբին սիրում զբաղվել, ինչ է նա սիրում, ինչն է հատկապես լավ ստացվում իր մոտ և ինչում է նրան օգնություն հարկավոր:

Բաբին բժշկին պատմեց, որ իր սիրելի զբաղմունքը տիկնիկներով խաղալն է, դասընկերների հետ զվարճանալը և դպրոց գնալը: Նա բժշկին ասաց նաև, որ նրան դպրոց երբեմն ուղեկցում է մայրը, երբեմն հայրը, իսկ երբեմն էլ դասարանից դասարան տեղափոխվելու ժամանակ համադասարանցին ու ուսուցիչն են օգնում: Բաբին բժշկին ասաց, որ նա ցանկանում է շոշափողական սալահատակ ունենալ, որով կկարողանա ինքնուրույն դասարանից դասարան տեղաշարժվել:

Ինչ եք կարծում, հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակն ինձ պետք է, - հարցրեց Բաբին բժշկին:

Պարզելու համար մենք պետք է հանդիպենք այլ մասնագետների՝ քո մասին ավելին իմանալու համար: Օրինակ, մենք պետք է իմանանք, թե ինչպես ես կարողանում հոգ տանել ինքդ քո մասին, հագնվել, լողանալ, սովորել և խաղալ: Որպեսզի կարողանաս ազատ զբաղվել այն ամենով, ինչ քեզ հետաքրքրում է, մենք պետք է իմանանք, թե որ դեպքերում ես դժվարանում և ինչպիսի աջակցության կարիք ունես, - բացատրեց բժիշկը Բաբիին:

Բայց ինչու ես այսքան տխուր, - հետաքրքրվեց բժիշկը, երբ նկատեց Բաբիի տխուր դեմքը:

Եթե ես հաշմանդամություն ունեցող անձի կարգավիճակ ունենամ, և իմ դասարանում ոչ ոք դա չունենա, ինձ կծաղրեն, - շշնջաց Բաբին:

Իհարկե ոչ, Բաբի, մենք բոլորս տարբեր ենք, ես ակնոց եմ կրում, ոմանք անվասայլակով են տեղաշարժվում, ոմանք խոսում են ժեստերի լեզվով և մենք հարգում ենք միմյանց տարբերությունները: Եկեք, որպեսզի այս ամենը բացատրենք երեխաներին, բոլորս միասին հետաքրքիր մի բան մտածենք, - ասաց բժիշկն ու դիմեց ծնողներին:

«Մտածենք», - արագ համաձայնեցին ծնողները:

Դե մտածենք,- ուրախացավ Բաբին ու դեմքին ժպիտ հայտնվեց: Միգուցե իմ դասընկերներից որևէ մեկը նույնպես լրացուցիչ աջակցության կարիք ունենա և այսուհետ կիմանա, թե ինչպես ստանալ այն: Մենք բոլորս ունենք տարբեր կարողություններ և կարիքներ, իսկ դա նշանակում է, որ ոչ թե միայն ես, այլ մենք բոլորս ենք տարբեր: